

Հայ Դատի հանձնախմբի գործունեության լուսարանումը Բեյրութի «Չարթոնք» օրաթերթում (2005-2015 թթ.)

Շարոյան Էլեն Ա.

Պատմության ամբիոնի հայցողի,

Վանաձորի պետական համալսարան (Վանաձոր, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0007-8318-9345>

elen2099@mail.ru

ՀՏԳ՝ 94(495); EDN: MBRHJU

DOI: 10.58587/18292437-2024.6-87

Հանգուցաբառեր և բառակապակցություններ` Հայ Դատի հանձնախումբ, Բեյրութ, Ցեղասպանություն, ճանաչում, հատուցում, Սփյուռք, «Չարթոնք» օրաթերթ, լոբբիստական կազմակերպություններ

Освещение деятельности Армянского национального комитета в Бейруте газета "Зартонк" (2005-2015 гг.)

Шароян Элен А.

Соискатель кафедры истории,

Ванадзорский государственный университет (Ванадзор, РА)

Аннотация: Национально-политическая, общественно-литературная газета "Зартонк", которая публикуется в Ливане, в своих публикациях регулярно ссылается на деятельность Армянского национального комитета.

"Зартонк" подчеркивает необходимость укрепления связей Родина-Дiaspora, считая, что они могут сыграть значительную роль в справедливом удовлетворении армянских требований.

"Зартонк" представляет деятельность Армянского национального комитета с позиции Либеральной партии Рамкавар, не скрывая своего удовлетворения работой структуры.

Ключевые слова и словосочетания: Армянский национальный комитет, Бейрут, Геноцид, признание, возмездие, Диаспора, лоббистские организации, газета "Зартонк"

Echoes of the activities of the Armenian National Committee in Beirut, daily newspaper "Zartonk" (2005-2015)

Sharoyan Elen A.

Candidate of the Department of History,

Vanadzor State University (Vanadzor, RA)

Abstract. The national-political, social-literary newspaper "Zartonk" regularly refers to the activities of the Armenian National Committee in its publications.

"Zartonk" emphasizes the need to strengthen the Homeland-Diaspora ties, believing that they can play a significant role in the fair satisfaction of Armenian demands.

"Zartonk" presents the activities of the Armenian National Committee from the position of the Ramkavar Liberal Party, not hiding its satisfaction with the work of the structure.

Keywords & Phrases: Armenian National Committee, Beirut, Genocide, recognition, retribution, Diaspora, lobbying organizations, Zartonk newspaper

Նախաբան

Մերձավոր Արևելքում հայության ներկայության լավագույն դրսևորումներից մեկը հայ մամուլի ակտիվ գործունեությունն է, որը մշտապես կարևորում է Սփյուռքում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունների՝ այդ թվում Հայ Դատի հանձնախմբի գործունեության լուսարանումը:

Լիբանանում հրատարակվող հայ պարբերականների թվում կարևոր տեղ է զբաղեցնում ազգային, քաղաքական, հասարակական և գրական ուղղվածություն ունեցող «Չարթոնք» օրաթերթը:

«Չարթոնք» օրաթերթ

«Չարթոնք» օրաթերթը Ռամկավար ազատական կուսակցության պաշտոնաթերթն է և լույս է տեսնում 1937 թվականից [2, էջ 322]: 2015 թվականից մինչ օրս «Չարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիրը Սևակ Հակոբյանն է [1, էջ 378]:

Օրաթերթը մշտապես անդրադարձ է կատարում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և Արցախյան հիմնախնդրի կարգավորմանն առնչվող հարցերին, այդ մասին հրատարակում է տեղեկատվական և վերլուծական բազմաթիվ հոդվածներ:

«Չարթօնք»-ը մշտական ուշադրության կենտրոնում է պահում նաև Հայ դատի հանձնախումբի գործունեությունը, որի հիմնական նպատակն է Հայոց ցեղասպանության ճանաչումը և Թուրքիայից հատուցում պահանջելը, Արցախյան հարցի կարգավորմանն աջակցելը, Հայաստանին վերաբերող խնդիրների լուծմանն օժանդակելը [3, էջ 89]:

Հայ դատի հանձնախմբի գործունեության լուսարանումը

«Չարթօնք» օրաթերթը, կարևորելով Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը 2004 թվականի դեկտեմբերի 23-ի համարում կարևորվում է Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների անհրաժեշտությունը: Թերթը ներկայացնում է այն ճանապարհը որով կարելի համակարգել և օգտագործել Հայաստանի Հանրապետության ու սփյուռքահայության ներուժը, հստակ միջոցներով ապահովել սփյուռքահայության ամբողջական համագործակցությունը մայր հայրենիքի հետ [4, էջ 2]:

«Չարթօնք»-ը կարևորում է Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը և Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների դերը Մայր հայրենիքի զարգացման և շենացման գործում:

«Չարթօնք»-ը մշտապես անդրադառնում է Հայ Դատի խնդրին, առաջ է քաշում հայ ժողովրդի պահանջատեր լինելու պատմական իրավունքը: Այս համատեքստում կարևոր է 2005 թ. փետրվարի 17-ի համարում «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ»-ի (ԱՄԱԼԱ) հիմնադրման 30 ամյակին նվիրված հրապարակումը: Թերթը նշում է, որ Գուրգեն Յանիկյանի իրականացրած գործողությունը նախանշում է ազատագրական պայքարի նոր միջոց Սփյուռքում բնակվող այն հայ երիտասարդների համար, որոնք 1965 թ. Մեծ Եղեռնի 50-ամյակի միջոցառումներից հետո «նոր էին արթնացել թմբիկից և ելք էին որոնում» [5, էջ 2]:

«Չարթօնք»-ը, հղում անելով թուրքական «Հյուրիեթ» թերթին, հայտնում է, որ ԱՄՆ-ի հայության շրջանում պառակտման գործընթաց է սկսվել, ինչը պայմանավորված է ԱՄՆ-ում գործող հայկական երկու ազդեցիկ կառույցների՝ Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի և Ամերիկայի հայկական համագումարի միջև ծագած անհամաձայնության հետ: Ըստ թերթի տեղեկությունների ԱՄՆ-ի նախագահ Չոր Բուշի վարչակազմը պատրաստվում է Հայոց ցեղասպանության ճանաչման դիմաց հայ համայնքին առաջարկել հայ ժողովրդի կողմից Թուրքիային ներկայացվող հողային և փոխհատուցման պահանջներից հրաժարվելու ծրագիր, որին Ամերիկայի հայկական համագումարը հայտնել է իր աջակցությունը: Զփորձելով գնահատական տալ «Հյուրիեթ»-ի

տրամադրած տեղեկությանը՝ թերթը նկատում է, որ ամերիկահայ լոբբիստական այս երկու կառույցների միջև մշտապես եղել է մրցակցություն, որը թերթը պայմանավորում է Հայոց ցեղասպանության և հայկական պահանջատիրության նկատմամբ Հայ Դատի հանձնախմբի «մենաշնորհային» մոտեցմամբ: [6, էջեր 1, 4]:

2005 թ. ապրիլի 15-ի համարում «Չարթօնք»-ը անդրադառնում է Սրասբուրգ քաղաքում Գերմանիայի Կանաչների կուսակցության պատգամավոր, ազգությամբ թուրք Ջեմ Էօզդեմիրի կողմից կազմակերպված աշխատաժողովին, որը նիրված էր Թուրքիայի հայերի վիճակին և հայկական հարցին: Թերթը թեև նշում է, աշխատաժողովի աշխատանքների մասին թուրքական մամուլը շատ տեղեկություններ չի տրամադրում, այնուամենայնիվ հայտնում է, որ աշխատաժողովի մասնակիցների թվում են եղել թուրք պատմաբան Թաներ Աքչանը, «Չաման» թերթի աշխատակից Էթին Մահչուպյանը, «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանտ Դինքը, «Մարմարա» թերթի խմբագիր Ռաֆֆի Արաքսը, ինչպես նաև Եվրոպայում գործող հայկական կառույցների, կուսակցությունների և Եվրոպայի հայկական միության անդամներ: Թերթը ընթերցողի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ ժողովի պատվին պատրաստվել է ազդագիր, որտեղ թուրքական դրոշի մահիկն ու աստղը գունավորված են հայկական եռագույնով: Թերթը սա որակում է իբրև հայ-թուրքական մերձեցման խորհրդանիշ:

«Չարթօնք»-ը բացահայտում է ժողովի մասնակիցների տրամադրությունները հայ-թուրքական հարաբերությունների, հայոց պահանջատիրության և ցեղասպանության ճանաչման հարցերում: «Չաման» թերթի աշխատակից Էթին Մահչուպյանն իր ելույթում ընգծել է Հայկական հարցը քաղաքական հարցից դեպի բարոյական հարց որակելու անհրաժեշտությունը: Նա նշել է, որ Հայոց ցեղասպանության օրերին մեծ թվով հայ մանուկներ ապաստան են գտել մահմեդականների ընտանիքներում: Մինչդեռ այս իրողությունը Սփյուռքի հայությունը չի ցանկանում ընդունել քանի որ Հայկական հարցը կվերածվի մարդասիրական խնդրի: Զննարկմանը Հրանտ Դինքը հավելել է, որ ովքեր պնդում են Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը, հիմնականում նրանք են, ովքեր իրապես չեն ցանկանում հասնել հարցի լուծմանը: Հ. Դինքը միաժամանակ արձագանքել է Եվրոպայի հայկական միության, Դաշնակցություն կուսակցության առաջ քաշած այն մտքին, ըստ որի՝ Թուրքիայում բնակվող հայերը պատանդ են այդ երկրում: Թուրքահայ լրագրողները դրան հակադարձել են, որ իրենց համարում են Թուրքիայի

լիիրավ քաղաքացիներ և իրենց պատանդի կարգավիճակում չեն զգում: Թերթը, մեջբերելով Եվրոպայի հայկական միության անդամ Լորան Լեյլեքյանի խոսքը, Թուրքիայի հայ համայնքի ներկայացուցիչների հնչեցրած մտքերը որակում է երկիմաստ, նշելով, որ նրանք փորձում են խոսել Ցեղասպանության մասին՝ չօգտագործելով այդ տերմինը: Նրանք աշխատաժողովը որակում են թուրքական թելադրանքով իրականացված միջոցառում, որը հիշեցնում է հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի գործունեությունը [7, էջեր 1, 4]:

«Չարթոնք»-ը նկատում է, որ Թուրքիայում ապրող հայերի կացությանը Դաշնակցության տված գնահատականը Հրանտ Դինքը չի կիսում և Դաշնակցությանը համեմատում է «Թուրքիոյ ամենեն հետադիմական ցեղապաշտ տարրերի» հետ: Թերթն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ թուրքահայ լրագրողները իրենց խոսքում կարմիր թելի պես առաջ են տանում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, Հայոց ցեղասպանության նկատմամբ մոտեցումների փոփոխության գաղափարը [8, էջ 2]:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված համարում թերթը անդրադառնում է հայ կաթողիկե պատրիարքարանի պատասխանատու Հ. Վարդան եպիսկոպոս Աշգարյանի խոսքին, ով ընդծում է հայ ժողովրդի արդար պահանջի իրավունքը և Հայ Դատի հատուցմանը հասնելու ձգտումը: Դիմելով հայրենիքում և Սփյուռքում բնակվող հայությանը՝ Վ. Աշգարյանը կոչ է անում լինել միասնական և մեկ բռունցք դարձած կանգնել մեր նորանկախ հայրենիքի կողքին, քանի որ նա է մեր բոլոր արդար պահանջերի իրավատուն [9, էջ 1]:

2005 թ. մայիսի 18-ի համարում թերթը ներկայացնում է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման հարցը, բացահայտում դրա պատճառները և ներկայացնում թե ի՞նչ հետևանքներ կունենա Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը: Ուշադրություն է դարձվում այն հանգամանքի վրա, որ ցեղասպանության իրողության ճանաչման հարցում թուրքական կառավարության որդեգրած ժխտողական քաղաքականությունը պայմանավորված է նրանով, որ Թուրքիան գիտակցում է, թե ինչպիսի՞ սպառնալիքներ է այն պարունակում թուրքական պետության տարածքային ամբողջականության և ազգային շահերի տեսանկյունից: Թերթը փորձում է բացահայտել, թե ինչու՞ Հոլոքոստի պարագայում համաշխարհային հանրության ճնշումն օգնեց հասնել միջազգային ճանաչման և հատուցման, իսկ Հայոց ցեղասպանության պարագայում նույն արդյունքին հասնել չի հաջողվում: Թերթի կարծիքով առաջին հերթին դա պայմանա-

վորված էր նրանով, որ Հայոց ցեղասպանությունը ամբողջովին ուժասպառ էր արել հայ ժողովրդին, ով կորցրել էր իր ազգային, քաղաքական ականավոր դեմքերին, մտավորականներին: Երկրորդ՝ Մեծ Եղեռնի օրերին հայ լրատվական միջոցները սակավ էին, ուստի դժվար էր ցեղասպանության ողջ իրողությունը ներկայացնել համայն աշխարհին: Երրորդ՝ Գերմանիան ընդունեց հրեաների Հոլոքոստը, քանի որ տվյալ ժամանակաշրջանի երկու մեծագույն պետությունները՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը դեմ էին Գերմանիային, իսկ այսօր Թուրքիան հանդիսանում է տնտեսական և քաղաքական առումով ազդեցիկ տարածաշրջանային տերություն, ՆԱՏՕ-ի անդամ և հավաքական Արևմուտքի դաշնակից: Թերթը հույս է հայտնում, որ Հայ Դատի պահանջատիրության գործընթացը պետք է լինի համայն հայության ուշադրության և խնդրո առարկան, որի լուծումը չի կարող ունենալ վաղեմության ժամկետ [10, էջ 2]:

«Չարթոնք»-ը հայտնում է, որ 2005 թ. հոկտեմբերի 20-ին Բեյրութի Հայկազյան համալսարանի Ավանդների ակումբի հրավերով «Հայկական հարցի նորագույն զարգացումները թեմայով» դասախոսությամբ հանդես է եկել Հայ Դատի կենտրոնական գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը: Նա շեշտել է, որ սխալ է նույնացնել Հայկական հարցը Հայոց ցեղասպանության և հայկական տարածքային պահանջների հետ, հավաստելով, որ Հայ դատն ունի պատմական, իրավական, բարոյական և քաղաքական կողմեր [11, էջ 4]:

«Չարթոնք»-ը գրում է, որ Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ ամերիկահայերը շուրջ 10 հազար նամակ են ուղղել ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի նախագահ Դենիս Հասթերթին, պահանջելով օրակարգ մտցնել Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ԱՄՆ-ի Մենատի միջազգային հարաբերությունների կոմիտեի կողմից ընդունված բանաձևերը: Հղում անելով թուրքական «Հյուրիեթ» օրաթերթին, «Չարթոնք»-ը գրում է, որ Դ. Հասթերթը դժվար թե ընթացք տա ամերիկահայերի դիմումին, քանի որ ըստ թերթի տեղեկությունների՝ ԱՄՆ-ի գաղտնի գործակալության նախկին պաշտոնյաներից մեկը որոշ ժամանակ առաջ հայտարարել է, թե Դենիս Հասթերթը թուրքերից կաշառք է ստացել բանաձևերը օրակարգ չմտցնելու պայմանով [12, էջ 2]:

Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին ընդառաջ «Չարթոնք»-ը ներկայացնում է լիբանանահայ համայնքի կողմից իրականացրած միջոցառումները: Թերթը հայտնում է, որ Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա-ի գլխավորությամբ հայ քաղաքական կուսակցությունների, ներկա ու նախկին պաշտոնյաների և

Լիբանանում ՀՀ դեսպանի մասնակցությամբ ոգեկոչել են Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցը և ընգծել Հայ Դատի հետապնդման գործընթացի կարևորությունը, շեշտել դրան հասնելու համար համայն հայության միասնության անհրաժեշտությունը: Իր ելույթում ՀՅԴ անդամ Գառնիկ Մկրտիչյանը հայտարարել է, որ Հայոց ցեղասպանությունը պատմական անժխտելի իրողություն է, որը մինչ օրս չի դատապարտվել միջազգային հանրության կողմից, իսկ ոճրագործները շարունակում են մնալ անպատիժ [13, էջեր 2-3]:

«Չարթօնք»-ը անդրադառնում է Կանադայի Հայ Դատի հանձնախումբի նախաձեռնությամբ կազմակերպված 30-օրյա արշավին, որի նպատակն է բարձրացնել կանադացիների իրազեկվածությունն Արդրեջանի կողմից Հայաստանի և Արցախի նկատմամբ մարդու իրավունքների կոպիտ և հետևողական խախտումների մասին: Թերթի տեղեկություններով հանձնախումբն արշավի շրջանակում ամեն օր ներկայացնելու է որևէ հոդված, տեսանյութ կամ զեկուցում, որով ի հայտ կգան ադրբեջանական իշխող ռեժիմի անհարգալից վերաբերմունքը և կոպիտ իրավախախտումները մարդու իրավունքների նկատմամբ: Ըստ թերթի «Արդրեջան. ամոթանքի երեսուն օր» խորագիրը կրող արշավի նպատակն էր հասարակությանը տեղեկացնել Արդրեջանի խորամանկ քարոզչության, ապատեղեկատվության տարածման և քաղաքական ահաբեկումների մասին, որով փորձ էր արվում քողարկել երկրում տիրող բռնատիրական քաղաքականությունը [14, էջ 2]:

«Չարթօնք»-ն անդրադառնում է Նյու Ջերսիի Սրբոց Վարդանանց եկեղեցում Հայոց ցեղասպանության տարելիցին նվիրված հիշատակի միջոցառմանը, որին ներկա էին նաև Հայ Դատի հանձնախմբի անդամները, իսկ հանդիսության բացումը վստահված էր Հայ Դատի հանձնախմբի անդամ Անի Չաղլայանին: Թերթը ընգծում է կառույցի կարևորությունը հայ համայնքի կյանքում [15, էջ 2]:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին «Չարթօնք»-ը հաճախ է հարցազրույցներ, քննարկումներ կազմակերպում հայ անվանի գիտնականների, հասարակական-քաղաքական գործիչների հետ: 2015 թ. դեկտեմբերի համարում թերթը ներկայացնում է «Արմենայրես»-ի հարցազրույցը ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի հետ: Նա անդրադառնալով Հայ Դատի հանձնախմբի գործունեությանը աշխարհի տարբեր երկրներում, նշում է, որ 1965 թ. հետո, երբ հայ ժողովուրդը ներքաշվեց Թուրքիայի կողմից ասպարեզ նետված Հայոց ցեղասպանության լինել-չլինելու հարցը վերաբերյալ բանավեճի մեջ, հայ ժողովուրդը շեղվեց

պահանջատիրության գործընթացից և միայն Հայ Դատի հանձնախմբերի ու հայկական լրբիստական այլ կառույցների միջոցով շարունակվեց խոսվել պահանջատիրության մասին [16, էջ 3]:

«Չարթօնք»-ը, Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախօրյակին՝ 2015 թ. փետրվարին, պատմում է Լեհաստանի Հայ Դատի հանձնախմբի գործունեության մասին: Թերթի կարծիքով Լեհաստանում հայանպաստ քաղաքական գործունեության աշխուժություն է նկատվում 2014 թ. մարտի 12-ից, երբ Լեհաստանում կազմավորվեց Հայ Դատի հանձնախումբը: Այդ կապակցությամբ թերթը գրում է, որ Հայ Դատի հանձնախմբի նվիրյալ անդամների հիմնական նպատակն է իրենց գործունեությամբ ու ծրագրերով հայ ժողովրդի բարեկամ լեհ ժողովրդին, լեհ հասարակությանն ու քաղաքական դեկավարությանը մոտեցնեն Հայոց ցեղասպանությանն ու հայ ժողովրդի պահանջատիրությանը: «Չարթօնք»-ը հույս է հայտնում, որ Հայ Դատի Լեհաստանի հանձնախումբը դառնալու է Հայ Դատի ազգանվեր ցանցի մի մասնիկը, հայկական ազգային շահերի հավատարիմ պաշտպանը և իր ներդրումն է ունենալու հայոց պահանջատիրության միասնական աշխատանքների հաջող իրականացման հարցում:

Թերթն անդրադառնում է Կրակովի Յագելոնյան համալսարանի պատմության ֆակուլտետում մեկնարկված «Խոսենք Հայաստանի մասին» հանրային գիտական քննարկումների շարքին, որի շրջանակներում տեղի է ունեցել «Մումզայիթ և Խոջալու» խորագրով նիստ: Թերթը հայտնում է, որ նիստից շաբաթներ առաջ Լեհաստանում Ադրբեջանի դեսպանության կողմից գործադրվում են աննախադեպ քաղաքական ճնշումներ, խոչընդոտներ, գրավոր բողոքներ են ուղարկվում նիստի կազմակերպիչներին և Լեհաստանի արտաքին գործերի նախարարությանը, այն պատճառաբանությամբ, թե լեհական կողմը հայանպաստ և միակողմանի մոտեցում է ցուցաբերում հայադրբեջանական վիճելի հարցերի շուրջ: Ի հեճուկս ադրբեջանական բոլոր տեսակի ճնշումներին, «Մումզայիթ և Խոջալու» խորագրով նիստը կայանում է և լեհերենով զեկուցմամբ է հանդես գալիս Լեհաստանի Հայ Դատի հանձնախմբի անդամ, ծագումով հայ Արմեն Արտվիլյալ: Նա ներկայացնում է Մումզայիթում և Արցախի Իվանյան (Խոջալու) գյուղում տեղի ունեցած ադրբեջանական բռնությունները, դրանք որակելով 20-րդ դարի ամենասարսափելի ողբերգություններից մեկը: Թերթը կարծիք է հայտնում, որ Հայկական հարցի, արցախահայության, Հայոց ցեղասպանության թեմաներով գիտական քննարկումները նպաստում են Հայ դատի, պահանջատիրության լուսաբան-

մանը և տանում դեպի նպատակաուղղված հայանպաստ քարոզչության [17, էջ 2]:

Թերթը մեծ կարևորություն է տալիս Լեհաստանի Հայ Դատի հանձնախմբի գործունեությանը և ողջունում նման քննարկումների, գիտաժողովների ու նիստերի անցկացումը, որը հնարավորություն է տալիս Հայկական հարցը լսելի դարձնել միջազգային հանրության շրջանում:

«Չարթոնք»-ը Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին առավել ակտիվությամբ է լուսարանում Հայ Դատի հանձնախմբի գործունեությունը, հրատարակում է վերլուծական հոդվածներ, որոնցում կարմիր թելի պես անցնում է հայոց պահանջատիրության հարցում Հայ Դատի հանձնախմբի նշանակության գաղափարը:

2015 թ. ապրիլի 24-ի համարում «Չարթոնք»-ը ներկայացնում է աշխարհի տարբեր երկրներում իրականացված ոգեկոչման միջոցառումները, Հայաստանում կազմակերպված լայնածավալ արարողությունները, կրկին անդրադառնում է Հայ Դատի և պահանջատիրության խնդրին, կարևորում է դրանում հայ երիտասարդության մասնակցությունը [18, էջ 6]:

Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գաղափարն աշխարհին լսելի դարձնելու նպատակով, «Չարթոնք»-ը 2015 թ. ապրիլ ամսվա համարներում հրատարակում է ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն թարգմանությամբ հոդվածներ, որոնք հնարավորություն են տալիս տեղեկատվություն տրամադրել թերթի օտարազգի լսարանին: Թերթը, միաժամանակ հղում անելով միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, հրապարակում է Թուրքիայի կողմից իրականացված ոճրագործության մասին վավերագրեր, ինչպես նաև Եղեռնագործության ակնատեսների վկայություններ և պատմություններ [19, էջ 6]:

«Չարթոնք»-ը անդրադառնում է 2015 թ. հուլիսին թուրք պատմաբան Թաներ Աքչամի հանդիպմանը լիբանանահայ համալսարանականների հետ: Նա նշում է, որ հայկական պահանջատիրությունը տարիներ շարունակ սահմանափակվել է Հայոց ցեղասպանության ճանաչման գաղափարով և միայն վերջին տարիներին է, որ Հայ Դատի մարմինները իրենց ուշադրությունը կենտրոնացրել են հատուցման գաղափարի և դրա կարևորության վրա: Այս փաստը երկար ժամանակ հանգիստ է պահել թուրքական կառավարությանը: Թ. Աքչամը, դիմելով Թուրքիայում ապրող հայությանը, կոչ է անում անվարան դիմել Թուրքիայի Սահմանադրական դատարանին՝ Թուրքիայի վրա ճշում գործադրելու նպատակով, քանի որ սահմանադրական օրենքը միակ օրենքն է, որին կարելի է նման իրավիճակում ապավինել [20, էջ

3]: Լուսարանելով թուրք պատմաբանի հանդիպումն ու բարձրացրած հարցերը՝ թերթը փորձում է հայության շրջանում ակտիվացնել պահանջատիրության ու Թուրքիայի կողմից հատուցման գաղափարը:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում արձանագրած հաջողություններին՝ «Չարթոնք»-ը 2015 թ. հուլիսի 11-ի համարում հայտնում է, որ Իսրայելի Կնեսեթի Կրթության, գիտության և մարմնակրթության հանձնաժողովում ի վերջո տեղի է ունեցել քննարկում՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի նախագիծը նիստերի օրակարգ բերելու կապակցությամբ: Երուսաղեմի Հայ Դատի հանձնախմբի պատասխաստու Հակոբ Սևանի փոխանցմամբ դա նախատեսվում է իրականացնել Հայաստանի անկախության օրը՝ սեպտեմբերի 21-ին: Թերթը կարևորում է նաև, Իսրայելի Կրթության, գիտության և մարմնակրթության նախարարությանը խորհրդարանական հանձնաժողովի կողմից տրված հանձնարարությունը. ավելի խորությամբ ուսումնասիրել Հայոց ցեղասպանությունը և փոփոխություններ կատարել ուսումնական ծրագրերում [21, էջ 3]:

«Չարթոնք»-ը տեղեկացնում է, որ 2015 թ. հուլիսի 23-ին կայացած լիազումար նիստում Բելգիայի խորհրդարանը բացարձակ մեծամասնությամբ հաստատեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև: Թերթը հիշեցնում է, որ այս բանաձևի վավերացումով Բելգիայի խորհրդարանը միանում է դաշնային կառավարությանը և Սենատին, որոնք ավելի վաղ էին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Բանաձևի վավերացումը ողջունում է Արդարադատության և Ժողովրդավարության Եվրոպայի հայության դաշինքի նախագահ Գասպար Կարապետյանը, կարևորելով Բելգիայի Հայ Դատի հանձնախմբի դերը բանաձևի ընդունման հարցում [22, էջ 3]:

Եզրակացություն

«Չարթոնք» օրաթերթը կարևորելով Հայ դատի հանձնախմբի գործունեության և հայոց պահանջատիրության գաղափարի լուսարանումը, 2005-2015 թթ. հրապարակումներում բարձր է գնահատում Հայ Դատի հանձնախմբի գործունեությունը՝ այն համարելով հայ ժողովրդի պահանջատիրության իրավունքի գլխավոր աղբյուրներից մեկը: Թերթը մշտապես կարևորում է Հայ Դատի գաղափարը, առաջ տանում հայ ժողովրդի պահանջատեր լինելու պատմական իրավունքը և հույս հայտնում, որ Հայ դատի պահանջատիրության գործընթացը կլինի համայն հայության ուշադրության կենտրոնում:

«Չարթոնք»-ը բազմաթիվ հրապարակումներում կարևորում է Հայ դատի և պահանջատիրության գաղափարի լուսարանումը ու միջազգայնացումը, անդրադառնում է Հայ

Դատի հանձնախմբի և գրասենյակների գործունեությանը, որոնք առավել ինտենսիվ բնույթ են ստանում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի տարում «Չարթոնք»-ն առավել ակտիվությամբ է լուսաբանում Հայ Դատի հանձնախմբի գործունեությունը, հրապարակում է վերլուծական տարբեր հոդվածներ, որոնցում կարմիր թելի պես անցնում է հայոց պահանջատիրության հարցում Հայ Դատի հանձնախմբի խաղացած դերը կարևորելը և գնահատելը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայ գրատպություն և գրքարվեստ. Հանրագիտարան: - Երևան, 2015
2. Հայ Սփյուռք հանրագիտարան: - Երևան, 2003
3. Հայ Սփյուռք տարեգիրք: - Երևան, 2012
4. «Չարթոնք», Բեյրութ, դեկտեմբերի 29, 2004 թ., № 290
5. «Չարթոնք», փետրվարի 17, 2005 թ., № 33
6. «Չարթոնք», ապրիլի 8, 2005 թ., № 71
7. «Չարթոնք», ապրիլի 15, 2005 թ., № 77
8. «Չարթոնք», ապրիլի 19, 2005 թ., № 80
9. «Չարթոնք», ապրիլի 24, 2005 թ., № 85
10. «Չարթոնք», մայիսի 18, 2005 թ., № 101
11. «Չարթոնք», հոկտեմբերի 21, 2005 թ. № 234,
12. «Չարթոնք», հոկտեմբերի 25, 2005 թ., № 237
13. «Չարթոնք», մարտ 27, 2011 թ. №
14. «Չարթոնք», փետրվար, 27, 2013 թ., թիվ 43
15. «Չարթոնք», մայիսի 4, 2014 թ., թիվ 89
16. «Չարթոնք», դեկտեմբերի 5, 2014 թ., թիվ 262,
17. «Չարթոնք», 7 փետրվարի, 2015 թ., թիվ 29
18. «Չարթոնք», 24 ապրիլի, 2015 թ., թիվ 88
19. «Չարթոնք», 27 ապրիլի, 2015 թ., թիվ 88
20. «Չարթոնք», 4 հուլիսի, 2015 թ., թիվ 143
21. «Չարթոնք», 11 հուլիսի, 2015 թ., թիվ 149
22. «Չարթոնք», 25 հուլիսի, 2015 թ., թիվ 159

Տժանա/Հանձնվել է՝ 29.11.2024
Рецензирована/Գրախոսվել է՝ 06.12.2024
Принята/Ընդունվել է՝ 13.12.2024